ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

№ 240-Ա «15» 09 2022 թ. ք.Երևան

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 397-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի N 30-L հրամանի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Պետական գույքի կառավարման կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաշխման սխեմատիկ կառուցվածքը հաստատելու և պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2020 թվականի մայիսի 27-ի N 61-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 397-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2) Հրամանի 2-րդ կետից հանել «իրավական ապահովման և դատական ներկայացուցչության» բառերը, «բաժիններ» բառը փոխարինել «բաժին» բառով,

3) Հրամանի 4-րդ կետում «քարտուղարության,» բառից հետո լրացնել «իրավական ապահովման և դատական ներկայացուցչության,» բառերը:

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված
Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի
2022 թվականի ---------- «------»-ի
N ----Ա հրամանի

«Հավելված
Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի
2021 թվականի դեկտեմբերի «23»-ի
N 397-Ա հրամանի

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՍԽԵՄԱՏԻԿ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ